ԱՆԴՐԷԷՒ-ից

ՋԱՒԱԴ ԲԱԼՈՒՂԵԱՆՑԻ

Ըսպասում եմ անհամբեր ես, երբ կը մրտնի արեգակ,
Արևելքից կը տարածուի զովացուցիչ մութն արագ,
Գետի վերայ խեղճ ձկնորսի առագաստը կը փքուի
Եւ հանգարտած փողոցներում լապտերն էլ կը վառուի...
Որ ես իսկոյն աճապարեմ իմ անկիւնը անվրդով՝
Ծածկեմ սիրտս վիրաւորուած կոշտ ու կոպիտ ձեռքերով.
Պիտի վառեմ մոմ իմ տիրոջ սուրբ պատկերի առաջին
Եւ աղօթեմ ոգևորուած, որ տայ հանգիստ իմ մրտքին...
Բոլոր զրկանք և անարգանք—այդ բոլորը պիտ՝ ներեմ.
Այն ժամ բախտ ու խաղաղութիւն անշուշտ իմ մէջ կը գրտնեմ...
Առաւօտեան ես գուրս կ՝ելնեմ մարդկանց մօտը պարզ դէմքով
Ու կը մեկնեմ ձեռքս նոցա, ինչպէս եղբորց, ժրպտալով,
Եւ կ՝ասեմ ես. «մոռանանք շուտ երեկւանը, ընկերներ,
Սիրենք իրար—այսօր Տէրը ինձ պարգևեց մի նոր սէր»...